

ՄԱՍ 6. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է տնտեսագետների (50.0%), ինչպես նաև բարձրագույն կրթությամբ կադրերի (87.0%) գերակշռությամբ: Ծառայության աշխատակիցների 71%-ը կազմում են կանայք, 29%-ը՝ տղամարդիկ:

Ծառայության համակարգի հաստիքների թվաքանակն ըստ տարիների բնութագրվել է հետևյալ համամասնություններով.

	2007թ.	2008թ.	2009թ.
Կենտրոնական ապարատ	181	181	181
Առանձնացված ստորաբաժանումներ	179	179	179
Ընդամենը, որից՝	360	360	360
<i>քաղաքացիական ծառայողներ</i>	<i>334</i>	<i>334</i>	<i>334</i>

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ենթատեքստով, հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել են Ծառայության աշխատակազմի 292 և ատեստավորվել 268 քաղաքացիական ծառայողներ: Ատեստավորման արդյունքում, զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով աշխատանքից ազատվել է 2 քաղաքացիական ծառայող (2007թ.):

Ծառայության աշխատակազմի վերապատրաստված և ատեստավորված քաղաքացիական ծառայողների թվաքանակները ներկայացված են ստորև.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերը	2007թ.		2008թ.		2009թ.		Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
	վերապատրաստվել են	լեզվավորություն	վերապատրաստվել են	լեզվավորություն	վերապատրաստվել են	լեզվավորություն	
բարձրագույն	-	-	-	-	2	2	
գլխավոր	19	25	19	17	26	21	2
առաջատար	53	47	32	31	43	45	
կրտսեր	38	34	18	23	39	33	
Ընդամենը	110	106	69	71	110	101	2

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության համակարգի աշխատակիցների շարժը բնութագրվել է հետևյալ համամասնություններով.

	2007թ.	2008թ.	2009թ.
Ընդունվել է աշխատանքի, այդ թվում՝	85	88	103
«Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում	42	44	35
Աշխատակազմում, որից՝			
<i>քաղաքացիական ծառայողներ</i>	32	30	31
<i>Մարդահամարի վարչությունում</i>	-	-	23
Ազատվել է աշխատանքից, այդ թվում՝	88	58	72
«Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրից	45	29	32
Աշխատակազմից, որից՝			
<i>քաղաքացիական ծառայողներ</i>	33	24	23
<i>Մարդահամարի վարչությունում</i>	-	-	1

Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար անցկացվել է 95 մրցույթ, այդ թվում՝ 2007թ.՝ 41, 2008թ.՝ 23, 2009թ.՝ 31: Արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվել են 37 քաղաքացիական ծառայող, այդ թվում 2007թ.՝ 24, 2008թ.՝ 6, 2009թ.՝ 7:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ծառայության նախագահի և աշխատակազմի ղեկավարի կողմից շնորհվել են համապատասխան դասային աստիճաններ՝ 2007թ.՝ 43, 2008թ.՝ 111, այդ թվում համապատասխան առավելագույն դասային աստիճաններ շնորհվել են 82 քաղաքացիական ծառայողի և 2009թ.-ին՝ 21 քաղաքացիական ծառայողի, այդ թվում առավելագույն դասային աստիճաններ շնորհվել են 4 քաղաքացիական ծառայողի:

Վիճակագրության զարգացման միջազգային միտումներին իրազեկ լինելու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նաև Ծառայության անձնակազմի մասնագիտական ներուժի զարգացմանը նպատակաուղղված համագործակցությունը: Ծառայության աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների, առանձին թեմատիկ քննարկումների և այլ միջոցառումների (այցեմասնակցությունների թիվը՝ 152, այդ թվում՝ 2007թ.՝ 60 (19 արտասահմանյան երկրում), 2008թ.՝ 54 (19 արտասահմանյան երկրում), 2009թ.՝ 38 (19 արտասահմանյան երկրում)):

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և հրապարակվել է 27 զեկույց մոտ 624 էջ ընդհանուր ծավալով, (այդ թվում, 2007թ.՝ 10 (318), 2008թ.՝ 7 (83), 2009թ.՝ 10 (223)):

Նշվածից զատ, Ծառայության աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են նաև տարբեր կազմակերպությունների (նախարարություններ, միջազգային կազմակերպություններ և այլն) կողմից կազմակերպված տեղային սեմինարների, դասընթացների, շնորհանդեսների, աշխատանքային հանդիպումների և այլն (այցեմասնակցությունների թիվը՝ 443, այդ թվում՝ 2007թ.՝ 72, 2008թ.՝ 101, 2009թ.՝ 270):

Կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, շարունակվել են նաև Ծառայությունում պարբերաբար

կազմակերպվող սեմինար-խորհրդակցություններն ու դասընթացները, ինչպես օտարերկրյա փորձագետների, այնպես և Ծառայության աշխատակիցների դասավանդմամբ և մասնակցությամբ: Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում Ծառայությունում կազմակերպվել են ընդհանուր թվով 28 սեմինար-խորհրդակցություններ, որոնց՝ Ծառայության աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 783:

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (նաև Գյումրիի մասնաճյուղի), Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Հայ-ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի, Երևանի ֆինանսաբանկային և բորսային համալսարանի, Երևանի պետական համալսարանի (նաև Իջևանի մասնաճյուղի), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Գավառի պետական համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի, Ռուս-Հայկական ժամանակակից հումատիտար ինստիտուտի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի թվով 534 ուսանողների համար:

2007 թվականին՝ ԱՊՀ վիճակագրական ծառայության կազմավորման 15-ամյակի կապակցությամբ, ներդրած ավանդի համար ԱՊՀ մասնակից երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 2007թ. փետրվարի 6-ի որոշմամբ 5 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրերով:

Վիճակագրության համակարգում երկարամյա ծառայության և ներդրած ավանդի համար Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007թ. ապրիլի 28-ի թիվ 326-Ա, 2008թ. հունիսի 25-ի թիվ 394-Ա և 2009թ. մարտի 9-ի թիվ 181-Ա որոշումներով Ծառայության 3 աշխատակից խրախուսվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալներով, Ծառայության նախագահի և աշխատակազմի ղեկավարի հրամաններով 38 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրերով, իսկ Ծառայության նախագահի հրամանով 1 քաղաքացիական ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի: